Հաստատված է
Եվրոպական համալսարանի
Գիտական խորհրդի
2019 թ.-ի հունիսի 06-ի
թիվ 09 նիստում,
Ռեկտոր՝ Հ. Բիշարյան
Հաստատված է
Հայաստանի եվրոպական համալսարանի
Գիտական խորհրդի
2023 թ.-ի նոյմեբերի 28-ի
թիվ 46 նիստում
Ռեկտոր՝ Հ. Բիշարյան

Approved by
the Scientific Council of the
European University
at the Session N9
June 06, 2019
Rector: H. Bisharyan
Amended by
the Scientific Council of the
European University of Armenia
at the Session N46
November 28, 2023
Rector: H. Bisharyan

(ստորագրություն, Կ.Տ./signature)

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Դասընթացի առարկայական ծրագիրը փաստաթուղթ է, որը կազմվում է յուրաքանչյուր դասընթացի համար՝ հիմնվելով մասնագիտական կրթական ծրագրով և ուսումնական պլանով հաստատված պահանջների վրա:

1.2 Դասընթացի առարկայական ծրագիրը սահմանում է.

ա) դասընթացի նկարագիրը, որը ներառում է դասավադվող ժամանակահատվածը, դասընթացին հատկացվող կրեդիտները և ժամաքանակը, կրթաբլոկը, դասընթացից ստացված կարողունակությունների ստուգման ձևերը, մուտքային պահանջը, դասընթացի նպատակը և անհրաժեշտ ռեսուրսները,

բ)դասընթացի կրթական վերջնարդյունքները և վերջիններիս համահունչությունը ՄԿԾ-ին

գ) դասընթացի թեմաները և դրանց համա-

REGULATION
ON DEVELOPMENT AND APPROVAL OF COURSE SYLLABUS
1. GENERAL PROVISIONS

1.1 Course syllabus is a document that is produced for each course based on the requirements set out in the professional educational program and curriculum.

1.2 Course syllabus defines:

a) course description,

b) the learning outcomes of the course and their alignment with the PEP,

c) course topics and their alignment with the learning outcomes of the course,

d) course evaluation according to factors and weights,

e) course content, assigned tasks and course teaching, assessment methods and rubrics.

հունչությունը դասընթացի կրթական վերջնարդյունքներին,
դ) դասընթացի գնահատումը՝ ըստ գործոնների ու կշիռների,
ե) դասընթացի բովանդակությունը, հանձնարարվող առաջադրանքներն ու դասընթացի դասավանդման, գնահատման մեթոդներն ու ռուբրիկները:

1.3 Դասընթացի առարկայական ծրագիրը մշակվում է՝ հիմնվելով հետևյալ սկզբունքների վրա.
1) համապատասխանություն բարձրագույն մասնագիտական պետական կրթական չափորոշիչներին,
2) համապատասխանություն գիտության և կրթության, դասավանդման մեթոդների ժամանակակից պահանջներին,
3) համապատասխանություն դասընթացի նպատակների ու խնդիրների և ՄԿԾ-ների առաքելության ու նպատակների միջև:

1.3. Course syllabus is developed based on the following principles:
1) compliance with higher professional state education standards;
2) compliance with modern requirements of science, education and teaching methods;
3) compliance of goals and objectives of study course with the mission and goals of education programs.

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. **Տիտղոսաթերթ** (տե՛ս Հավելված 1): Այն պետք է ներառի հետևյալ տվյալները.
1) Համալսարանի անվանումը,
2) Ամբիոնի անվանումը,
3) Մասնագիտության անվանումը և դասիչը,
4) Դասընթացի անվանումը, դասիչը,
5) Հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, էլ. փոստի հասցեն:

2.2 Դասընթացի նկարագիրը

2.2.1 Դասընթացի նկարագիրը ներառում է դասավանդվող ժամանակահատվածը, դասընթացին հատկացվող կրեդիտները և ժամաքանակը, կառուցամասը, դասընթացից ստացված կարողունակությունների ստուգման ձևերը, մուտքային պահանջը,

2. COURSE SYLLABUS STRUCTURE

2.1. **Cover sheet** (See Appendix 1). It should include the following data:
1) Name of the University,
2) Name of Chair,
3) Name of the specialty, code
4) Name of the course, code,
5) The author's full name, scientific degree, title.

2.2 Course Description

2.2.1 Course description includes the duration of the course, the number of credits and hours allocated to the course, the educational block, the forms of testing the competences obtained from the course, the entry requirement, the

դասընթացի նպատակը և անհրաժեշտ ռեսուրսները (տե՛ս Հավելված 2):

purpose of the course and the necessary resources.

2.2.2 **Դասավանդվող ժամանակահատված բաժնում** լրացվում է, թե որ կուրսում և կիսամյակում է դասավանդվելու տվյալ դասընթացը:

2.2.2 **In the taught period** section, the course and semester in which the given course will be taught is filled in.

2.2.3 **Դասընթացին հատկացվող կրեդիտները և ժամաքանակը բաժնում** ներկայացվում են կրեդիտային արժեքները և ժամաքանակը ըստ պարապմունքի տեսակների:

2.2.3 **Credits and number of hours allocated to the course** section presents the credit values and number of hours according to the types of lesson.

2.2.4 **Կառուցամաս բաժնում** լրացվում է, թե որ ՄԿԾ-ի որ կրթաբլոկում է գտնվում է տվյալ դասընթացը:

2.2.4 **In the education block** section**,** it is filled in which educational block the given course is defined.

2.2.5 **Գիտելիքի ստուգում** բաժնում լրացվում են ստուգման ձևերը օրինակ՝ *գործնական առաջադրանքներ/ընթացիկ ստուգումներ, միջանկյալ ու ամփոփիչ ստուգումներ:*

2.2.5 **In the knowledge test** section, test forms are filled in, for example, practical tasks/ongoing tests, mid-term and final tests.

2.2.6 **Մուտքային պահանջ** բաժնում լրացվում է թե ինչ նախնական պահանջներ են նախատեսված տվյալ դասընթացն ուսումնառելու համար:

2.2.6 In the **entry requirement** section, the initial requirements for studying the given course are filled in.

2.2.7 **Դասընթացի նպատակը** ընդհանրական ձևակերպում է ուսուցման ու դասավանդման մտադրությունների վերաբերյալ և ձևակերպվում է դասախոսի տեսանկյունից՝ ներկայացնելով դասընթացի ամենակարևոր դրույթները և առանձնահատկությունները: Նպատակը մատնանշում է, թե ինչ է ուսուցանելու դասախոսը դասընթացի շրջանակներում: Նպատակի սահմանումը կարելի է սկսել հետևյալ բայերով՝ *զարգացնել, ապահովել, օժանդակել, տեղեկացնել, ծանոթացնել, ձևավորել, պատրաստել, նախապատրաստել, խթանել, աջակցել, ծրամադրել և այլն:*

2.2.1 **Course goal** is a general formulation of teaching and learning intentions and formulated from the lecturer's point of view, presenting the most important points and peculiarities of the course. Purpose indicates what the teacher is teaching within the course. Definition of a goal can be started with the following verbs: *develop, provide, assist, inform, introduce, design, prepare, produce, promote, support and so on.*

2.2.8 **Անհրաժեշտ ռեսուրսներ** բաժնում ներկայացվում են կրթական, տեղեկատվական, տեխնիկական և մարդկային

2.2.8 The **necessary resources** section presents the data on educational, informational, technical and human resources.

ռեսուրսների մասին տվյալները:

2.3 Դասընթացի **կրթական վերջնարդյունքները** սովորողից ակնկալվող գիտելիքների, հմտությունների ու կարողությունների այն շրջանակն է, որը ցույց է տալիս, թե դասընթացի ավարտին ինչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա անել ուսանողը: Կրթական վերջնարդյունքի ձևակերպումը հարկավոր է սկսել ակտիվ գործողություն ցույց տվող բայով՝ խուսափելով *իմանալ, գիտենալ, սովորել, տեղյակ լինել, հասկանալ, ընկալել ըմբռնել, տիրապետել* բայերից: Դասընթացի վերջնարդյունքները պետք է համապատասխանեն ՈԱՇ-ի և ՈԵՇ-ի չափանիշներին: Դասընթացի վերջնարդյունքները պետք է ձևակերպվեն այնպես, որ ուսանողի կողմից գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձեռբերումը հնարավոր լինի դրսևորել, դիտարկել, չափել ու գնահատել: Եթե դասընթացի նպատակը նյութի հենքային իմացության ձեռքբերումն է, ապա կրթական վերջնարդյունքները պետք է ներկայացվեն հետևյալ բայերով. *վերարտադրել, բնորոշել, վերհիշել, թվարկել, նկարագրել, բացատրել, քննարկել*: Ընդհանուր մասնագիտական և մասնագիտացման դասընթացների վերջնարդյունքները պետք է ներկայացվեն հետևյալ բայերով՝ *լուծել, իրականացնել, գնահատել, մշակել, սահմանել, համադրել, հաշվարկել, նախագծել:*

2.2.2 Course **learning outcomes** are the range of knowledge, skills, and abilities expected from the student that demonstrates what the student should know, understand and be able to do at the end of the course. The formulation of outcome should begin with a verb that shows an active action, avoiding verbs as: *knowing, learning, being aware, understanding, comprehending, mastering.* Course learning outcomes must be aligned with NQF and EQF descriptors. The learning outcomes of the course should be formulated so that the student's acquisition of knowledge, abilities and skills can be demonstrated, observed, measured and evaluated. If the purpose of the course is to gain a basic knowledge of the material, the learning outcomes should be presented as follows: *reproduce, characterize, recall, enumerate, describe, explain, discuss.* Course learning outcomes of general professional and specialization should be presented in verbs of: *solve, implement, evaluate, develop, define, compare, calculate, plan.*

2.2.1 Առարկայական ծրագրեր մշակելիս և լրամշակելիս անհրաժեշտ է կրթական վերջնարդյունքները համապատասխանեցնել ՄԿԾ վերջնարդյունքներին: ՄԿԾ ու դասընթացի կրթական վերջնարդյունքների ձեռքբերումն ապահովելու համար իրականացվում է քարտեզագրում, որտեղ հստակ արտացոլվում է, թե դասընթացների որ

2.2.3 When developing and amending a course syllabus, it is necessary to match the learning outcomes with the ones of the PEP. In order to ensure the achievement of the learning outcomes of the PEP and the course, a mapping is carried out, which clearly reflects which course topics and learning outcomes are

թեմաների ու կրթական վերջնարդյունքների միջոցով է սովորողը ձեռքբերելու ՄԿԾ ակնկալվող կրթական վերջնարդյունքները (տե՛ս Հավելվածներ 3,4):

set in order to achieve the expected learning outcomes of PEP.

2.4 Դասընթացի վերջնարդյունքների գնահատումը բաժնում ներկայացվում են դասընթացի գնահատման գործոնները, կշիռները: Առաջադրանքների գնահատման համար կիրառվում են «ՀԵՀ գնահատման քաղաքականություն և գնահատման ռուբրիկներ»-ում ամրագրված ռուբրիկները՝ ըստ դասընթացի առանձնահատկություն-ների (տե՛ս Հավելված 5):

2.2.11 In the section of **Evaluation of the final results of the course** the course evaluation factors and weights are presented. The rubrics specified in the "EUA Grading Policy and Grading Rubrics" are used for the assessment of the assignments, according to the specifics of the course.

2.5 **Դասընթացի բովանդակություն բաժնում** ներկայացվում են թեմաները, դրանց հատկացված ժամաքանակը, թեմայի համառոտ նկարագիրը, դասավան-դման և գնահատման մեթոդները, ռուբրիկները՝ ըստ առաջադրանքների (տե՛ս Հավելված 6):

2.2.12 **The course content section** presents the topics, the number of hours allocated to them, a brief description of the topic, teaching and evaluation methods, rubrics according to tasks.

2.6 **Դասընթացի միջանկյալ և ամփոփիչ ստուգումներ բաժնում** ներկայացվում են միջանկյալ և ամփոփիչ ստուգումների հարցերը ներառող թեմաները (տե՛ս Հավելված 7):

2.3. The questions covering Midterm and Final test topics are completely presented in the section of **Midterm and Final Tests.**

2.7 **Ուսումնամեթոդական գրականություն** բաժնում ներկայացվում է դասընթացի բոլոր թեմաների յուրացման համար անհրաժեշտ գրականության ցանկը (տե՛ս Հավելված 8):

2.4 The **educational literature** section presents the list of literature necessary for mastering all topics of the course.

2.8 **Անհատական աշխատանքների կամ հետազոտական նախագծերի ցանկը** բաժնում ներկայացվում է դասընթացի բոլոր թեմաները ընդգրկող անհատական աշխատանքների ցանկը (տե՛ս Հավելված 9):

2.5 In the section of List of individual Papers or Research Projects the list of individual papers or research projects covering all topics of the course is presented in the section.

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3. COURSE APPROVAL PROCEDURE

3.1 Դասընթացի առարկայական ծրագրի մշակումը համարվում է դասախոսի մեթոդական աշխատանք և մտնում է ամբիոնի ուսումնամեթոդական գործառույթների մեջ:

3.1 The development of the course syllabus is considered as a methodical work of the lecturer and is included in educational and methodological functions of the chair.

3.2 Առարկայական ծրագրի մշակման ժամկետները սահմանվում են ամբիոնի կողմից՝ վավերացվելով ամբիոնի նիստի արձանագրությամբ:

3.2 Syllabus deadlines are set by the chair, being ratified by chair session.

3.3 Դասընթացի առարկայական ծրագիրը հաստատվում է ՀԵՀ գիտխորհրդի կողմից՝ համապատասխան ամբիոնի երաշխավորությամբ:

3.3 Course syllabus is approved by EUA Scientific Council with the recommendation of the appropriate chair.

3.4 ՀԵՀ գիտխորհրդում հաստատված բոլոր առարկայական ծրագրերը պետք է հասանելի լինեն ուսանողներին դասընթացի դասավանդմանը նախորդող շաբաթվա ընթացքում:

3.4 All syllabuses approved by EUA Scientific Council must be available to students during the week preceding the course.

4. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

4. COURSE EVALUATION

4.1 Դասընթացի առարկայական ծրագրի որակի ապահովումը իրականացնում է համապատասխան մասնագիտական ամբիոնը:

4.1 Quality assurance of the course syllabus is implemented by the relevant professional chair.

4.2 Ամբիոնը պարբերաբար վերահսկում է առարկայական ծրագրի մշակման և իրականացան գործընթացը և ձեռնարկում միջոցառումներ ժամանակացույցի խախտումները կանխարգելելու համար:

4.2 The vhair regularly monitors the development and implementation of syllabus and takes action to prevent schedule violations.

4.3 Համապատասխան մասնագիտական ամբիոնը պարբերաբար ամբիոնի նիստերում քննարկում է դասընթացի առարկայական ծրագրերը՝ շարունակական բարելավման նպատակով:

4.3 The relevant professional chair regularly discusses the course syllabuses in chair sessions for continuous improvement.

4.4 Առարկայական ծրագրի գնահատման նպատակով ամբիոնի վարիչը անցկացնում է դասալսումներ՝ դասախոսների վարպետության գնահատման, ուսումնական ծրագրի և գործնականում ներկայացվող նյութի համապատասխանության,

4.4 In order to evaluate the syllabus, Head of the Chair conducts lesson observations for the purpose of assessing the lecturers' professionalism, in compliance with the academic program and the material presented in practice, and monitoring the students'

ուսանողների կողմից նյութի յուրացման մշտադիտարկման նպատակով: Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսի հետ, իսկ հիմնական հետևությունները՝ ամբիոնի նիստում:

learning of the material. The results of lessons observations are discussed with the lecturer and the main conclusions are discussed at the chair.

4.5 Ամբիոնի վարիչը վերահսկում և գնահատում է առարկայական ծրագրի համապատասխանությունը բարձրագույն կրթության ու գիտության զարգացման արդի պահանջներին, ժամանակակից մեթոդներին ու տեխնոլոգիաներին, մասնագիտական կրթական ծրագրի պահանջներին:

4.5 Head of the Chair supervises and evaluates the compliance of syllabus with the modern requirements of higher education and science development, modern methods and technologies, and the requirements of the professional education program.

4.6 Ամբիոնը ստուգում և գնահատում է առարկայական ծրագրի բովանդակությունը, վերջնարդյունքներին հասնելու հնարավորությունները, ուսումնառության ու գնահատման մեթոդները և դասավանդման որակը:

4.6 The Chair examines and evaluates the content of the syllabus, the possibilities for achieving the outcomes, the methods of learning and assessment, and the quality of teaching.

Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (16 pt, Bold)

_____ ԱՄԲԻՈՆ (14 pt, Bold)

Հաստատում եմ՝
ՀԵՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝
Գիտական աստիճան, կոչում,անուն, ազգանուն, Հայրանուն
« » _____ 2024թ.

_____
ստորագրություն

ԲԱԿԱԼԱՎՐԻ

_____ «_____» **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ (14 pt., Bold)**
դասիչը

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ (14 pt., Bold)

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (14 pt.)

Երաշխավորվել է ՀԵՀ Կառավարման ամբիոնի
_____ 2024թ-ի թիվ ___ նիստում,
Ամբիոնի վարիչ՝ _____ _____
ստորագրություն Անուն, Ազգանուն

Դասընթացի առարկայական ծրագրի հեղինակ՝ ՀԵՀ _____ ամբիոնի դասախոս, (11 pt.)
Գիտական աստիճան, կոչում,անուն, ազգանուն, Հայրանուն (էլ. հասցե) (11 pt.)

ԵՐԵՎԱՆ 20__(11 pt.)

Appendix 1

EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA (16 pt., Bold)

_____ CHAIR (14 pt., Bold)

Approved by
EUA Vice-Rector for Academic and Scientific Affairs
Full name, academic degree, title
« » _____ 2024

_____
signature

BACHELOR

_____ "_____" **SPECIALTY** (14 pt., Bold)
Code

COURSE TITLE (14 pt., Bold)

COURSE SYLLABUS (14 pt.)

Guaranteed at the EUA _____ Chair
at session __ , ____ _____, 2023
Head of the Chair, _____ _____
Signature Name, Surname

Author of the subject program of the course, Lecturer at _____ Chair (11 pt.)
Full name, Scientific degree, title(11 pt.)

YEREVAN 20 __ (11 pt.)

Հավելված 2

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կուրս/ Year	
Կիսամյակ/Semester	
Կրեդիտներ/Credits	
Դասընթացին հատկացվող ժամաքանակը/Workloads	
Կրթաբլոկը/Education block	
Գիտելիքի ստուգում/ Knowledge testing	
Մուտքային պահանջ/ Entry requirement	
Դասընթացի նպատակը/ Goal of the course	
Անհրաժեշտ ռեսուրսներ/ Necessary resources	

Հավելված 3

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՀՈՒՆՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԿԾ-ԻՆ

Դասընթացի կրթական վերջնարդյունքները (ԴԿՎ)	ՄԿԾ վերջնարդյունքներ				
	ՎԱ 1.	ՎԱ 3.	ՎԱ 4.	ՎԱ 6.	ՎԱ 14.
1. ԳԻՏԵԼԻՔ					
ԴԿՎ 1.1					
ԴԿՎ 1.2					
ԴԿՎ 1.3					
ԴԿՎ 1.4					
2. ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
ԴԿՎ 2.1					
ԴԿՎ 2.2					
ԴԿՎ 2.3					
3. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
ԴԿՎ 3.1					
ԴԿՎ 3.1					
ԴԿՎ 3.1					

Հավելված 4

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՀՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ

ԹԵՄԱՆԵՐ	ԳԻՏԵԼԻՔ				ՀՄՏՈՒԹՅՈՒՆ			ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ		
	ԴԿՎ 1.1.	ԴԿՎ 1.2.	ԴԿՎ 1.3.	ԴԿՎ 1.4.	ԴԿՎ 2.1.	ԴԿՎ 2.2.	ԴԿՎ 2.3.	ԴԿՎ 3.1.	ԴԿՎ 3.2.	ԴԿՎ 3.3.
ԹԵՄԱ 1. -------		x			x			x		
ԹԵՄԱ 2. --------	x		x				x		x	x
ԹԵՄԱ 3. -------		x				x		x		
ԹԵՄԱ 4.		x			x			x		
ԹԵՄԱ 5.	x		x				x		x	x
ԹԵՄԱ 6.		x				x		x		
ԹԵՄԱ 7.		x			x			x		
ԹԵՄԱ 8.	x		x				x		x	x
ԹԵՄԱ 9.		x				x		x		
ԹԵՄԱ 10.		x			x			x		

Հավելված 5

4. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Դասընթացի ուսումնասիրության ընթացքում ձեռքբերված գիտելիքները, մասնագիտական կարողությունները և հմտությունները, համաձայն ՀԵՀ ակադեմիական կրեդիտների կուտակման ու փոխանցման կանոնակարգի, գնահատվում են բազմագործոնային համակարգով՝ յուրաքանչյուր գործոնին տալով հետևյալ կշիռը.

Բոլոր գործոններով գնահատավող դասընթացներ / Subjects assessed with all factors	
Գործոններ / Factors	**Կշիռներ / Weights**
Հաճախում/ Attendance	
Ընթացիկ ակտիվություն և արտալսարանային աշխատանք / Current activity and extracurricular work	
Անհատական կամ հետազոտական աշխատանք / Individual or research paper	
Միջանկյալ ստուգում / Midterm exam	
Ամփոփիչ ստուգում / Final Exam	

Առաջադրանքների գնահատման համար կիրառվում են «ՀԵՀ գնահատման քաղաքականություն և գնահատման ռուբրիկներ»-ում ամրագրված և մասնագիտական պրակտիկայում կիրառվող այլ ժամանակակից մեխանիզմներ, որոնք ներկայացված են սույն ծրագրի 5-րդ բաժնում:

Հավելված 6

5. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԹԵՄԱ 1.

Ընդհանուր ժամեր՝ ___ ժամ, այդ թվում՝

- Դասախոսություն՝ __ ժամ,
- Գործնական՝ __ժամ,
- (Լաբորատոր՝ առկայության դեպքում):

Դասավանդման մեթոդներ՝

- Դասախոսություն,
- Քննարկում:

Գնահատման մեթոդներ՝

- Բանավոր հարցում,
- Թեստ,
- Խնդիրների լուծում:

<u>Թեմայի համառոտ նկարագիրը՝</u>

<u>Հանձնարարվող առաջադրանքները և գնահատման մեթոդներն ու ռուբրիկները՝</u>

Առաջադրանք 1.
Գնահատման մեթոդը՝
Գնահատման ռուբրիկը՝

Առաջադրանք 2.
Գնահատման մեթոդը՝ Խնդիրների լուծում,
Գնահատման ռուբրիկը՝

Հավելված 7

6. ՄԻՋԱՆԿՅԱԼ ԵՎ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Միջանկյալ ստուգման հարցատոմսերը կազմվում են հետևյալ թեմաներից /ցանկալի է ներառել գործնական առաջադրանք/

Ամփոփիչ ստուգման հարցատոմսերը կազմվում են հետևյալ թեմաներից /ցանկալի է ներառել գործնական առաջադրանք/

Հավելված 8

7. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ /մինչև 10 տարվա և թվով մինչև 20 հիմնական գրականություն/

1.
2.

Հավելված 9

8. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑԱՆԿ

1.
2.